

**Նվիրվում է**

**ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի  
Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության  
գործունեության հնգամյակին**

«Ջրային ռեսուրսների կառավարումը Հայաստանում» գրքույկի նպատակն է ներկայացնել վերջին 5 տարիներին Հայաստանի Հանրապետությունում իրականացված ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության ոլորտի հիմնական բարեփոխումները, ինչպես նաև ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության գործունեությունը:

*ՀՀ բնապահպանության նախարարությունը շնորհակալություն է հայտնում Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալությանը՝ սույն գրքույկի հրատարակման համար:*



## ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

### Զրային ռեսուրսների կառավարման գործակալության գործունեության հնգամյակի առթիվ

Երկրագունդը կարելի է անվանել ջրային մոլորակ, սակայն նրա ջրային ռեսուրսների (ԶՌ) 97%-ը բաժին է ընկնում օվկիանոսներին, իսկ մնացածը տեղաբաշխված է սառցադաշտերում և երկրագնդի մեծ խորությունների վրա: Հետաքրքրական է, որ մարդկության համար հասանելի և օգտագործման պիտանի ջրերը, որոնք գտնվում են գետերում և լճերում, կազմում են ոչ ավելի, քան 1%: Երկրագնդի հիդրոլոգիական համակարգն ամեն տարի ցամաք է բերում շուրջ 44 հազ. կմ<sup>3</sup> ջուր, որից Հայաստանի բաժինը կազմում է 0.01%` 46.6 կմ<sup>3</sup>:

Առաջին հայացքից թվում է, թե այս ծավալի ԶՌ-ը լիովին բավարար են հանրապետության ջրապահանջը բավարարելու համար, սակայն դրանք բաշխված են անհավասարաչափ, ինչպես տարածքային, այնպես էլ տարվա եղանակային կտրվածքներով: Սա անդրադառնում է ջրապահանջի բավարարման վրա` հանգեցնելով ջրի անբավարարության և անմատչելիության:

Ինչպես ասում են. «չկա ջրային ռեսուրսների անբավարարություն, կա ջրային ռեսուրսների ոչ ճիշտ կառավարում»: Այս համատեքստում, նպատակ ունենալով կանոնակարգել ջրային ոլորտում տեղ գտած թերությունները, ՀՀ կառավարության որոշմամբ 2002թ. ստեղծվեց Զրային

ռեսուրսների կառավարման գործակալությունը (ՋՈԿԳ)՝ որպես ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում:

ՋՈԿԳ-ի հիմնական առաքելությունն է եղել ջրի ազգային քաղաքականության ծրագրի և բնագավառի կառավարման օրենսդրության մշակման ապահովումը, ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը, ջրային պետական կադաստրի վարումը, ջրավազանային տարածքային կառավարման իրականացումը:

Չմանրամասնելով ՋՈԿԳ-ի գործունեությունը՝ տեղին է ընդգծել 5 տարիների ընթացքում գործակալության կողմից ՋՈ-ի կառավարման ոլորտում հետևյալ ձեռքբերումները. 1) ոլորտի օրենսդրական հիմքի ստեղծումը, 2) ջրավազանային տարածքային կառավարման իրականացումը, 3) հանրապետության 90%-ից ավելի ջրօգտագործման օրենսդրական դաշտ բերելը, 4) ջրային պետական կադաստրի հիմնումը:

Հանրապետության ՋՈ-ի կառավարման խնդիրների լուծմանը բազմակողմանի աջակցության համար հատուկ շնորհակալություն են հայտնում ԱՄՆ ՄՋԳ-ին, Համաշխարհային բանկին, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակին և բոլոր այն կազմակերպություններին, որոնք ինչ-որ չափով աջակցել են այս գործընթացին:

Բարձր գնահատելով կատարվածը՝ շնորհավորում են ՋՈԿԳ-ի աշխատակիցներին և մաղթում արդյունավետ գործունեություն բնագավառում ի նպաստ մեր երկրի կայուն զարգացման:

**ՀՀ բնապահպանության նախարար  
ՎԱՐԴԱՆ ԱՅՎԱԶՅԱՆ**



## Ջրային ռեսուրսների կառավարման ոլորտի հիմնական բարեփոխումները

Ջուրն ունի տնտեսական, սոցիալական և բնապահպանական արժեք: Հայաստանի Հանրապետության տարածքում առկա ջրային ռեսուրսները (ՋՌ) հանդիսանում են պետական սեփականություն և դրանց տնօրինումը, տիրապետումը և օգտագործումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մինչև 2002 թ., նախքան ջրային ոլորտի հիմնական բարեփոխումների իրականացումը, ՋՌ-ների կառավարումն ու օգտագործումը կատարվում էր մեկ մարմնի կողմից, ինչի հետևանքով առկա էին մի շարք թերություններ, ինչպիսիք են.

- ոլորտի կառավարման գործում ներգրավված պետական մարմինների գործառույթների ոչ հստակ տարանջատումը,
- ռեսուրսի կենտրոնացված կառավարումը խոշոր ջրօգտագործող մարմնի կողմից,
- ջրային ռեսուրսների հաշվառման տվյալների ցրվածությունը,
- ջրային ռեսուրսի կառավարումը՝ «պահանջարկն է ձևավորում առաջարկը» սկզբունքով:

2002 թվականից ի վեր ՋՌ-ի առավել կայուն և լիարժեք կառավարման նպատակով ՀՀ-ում իրականացվել են մի շարք բարեփոխումներ.

- Նոր ՀՀ ջրային օրենսգրքի ընդունում, 2002 թ.,
- ՋՌ-ների և ջրային համակարգերի կառավարման մարմինների բաժանում և գործառույթների հստակեցում՝ համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի,
- ՋՌ-ների կառավարման գործակալության հիմնադրում, 2002 թ.,
- ՋՌ-ների տարածքային կառավարման բաժինների հիմնադրում և հզորացում՝ ՋՌ-ի ապակենտրոնացված կառավարման նպատակով,
- Ջրային պետական կադաստրի (ՋԴԿ) ինստիտուտի ձևավորում, 2002թ.,
- ՀՀ «Ջրի ազգային ծրագրի մասին» օրենքի ընդունում:

Նոր ՀՀ ջրային օրենսգիրքը դարձավ ՀՀ ջրային ոլորտի իրավական և ինստիտուցիոնալ կառուցվածքի հիմքը: Օրենսգրքի հիմքում ՋՌ-ների համապարփակ կառավարման գաղափարն է, որի միջոցով է միայն հնա-

րավոր ապահովել ջրային պաշարների կենսունակ գործառնությունը թե՛ բնապահպանական, թե՛ տնտեսական առումներով: Ջրային օրենսգրքով սահմանվեցին ջրային ոլորտում կառավարման հիմնական գործառնությունները, որոնք են 1) ՋՌ-ների կառավարումը, 2) ջրային համակարգերի կառավարումը, 3) ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների կարգավորումը և 4) քաղաքականության մշակումը:

Վերոնշյալ գործառնությունների իրականացման համար ստեղծվեցին նոր կառուցվածքային միավորներ:

## Կառուցվածքային բարեփոխումներ

ՀՀ ջրային օրենսգրքի համաձայն ջրի ոլորտում ներդրվեց կառուցվածքային նոր համակարգ՝ տարբեր կառույցների միջև տարանջատելով ՋՌ-ների կառավարման ու պահպանման և ջրային համակարգերի օգտագործման գործառնությունները:

**Այսօր ջրային ռեսուրսների կառավարումն** իրականացնում է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի (ԲՊՆ) Ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը (ՋՌԿԳ), որը հիմնադրվել է 2002 թվականին: ՋՌԿԳ-ի հիմնադրմանը նախորդել են համաշխարհային բանկի աջակցությամբ ոլորտում կատարված ուսումնասիրությունների եզրահանգումները, իսկ կայացմանը՝ ԱՄՆ ՄՋԳ աջակցությունը: Հիմնադրման օրվանից ՋՌԿԳ-ն առաջատար դեր է ունեցել ՀՀ ջրային ոլորտի համար վճռորոշ բարեփոխումների մշակման և իրագործման գործում: ՋՌ-ների կառավարման և պահպանության քաղաքականության, ծրագրերի մշակման ու իրագործման գործընթացում ՋՌԿԳ-ն հաշվի է առել լավագույն միջազգային փորձը՝ ակտիվորեն համագործակցելով մի շարք կազմակերպությունների հետ: Մասնավորապես արդյունավետ է եղել համագործակցությունը ԱՄՆ ՄՋԳ հետ: ՋՌԿԳ-ն այսօր ապահովում է ՋՌ-ների օպտիմալ օգտագործումը՝ կիրառելով կառավարման այնպիսի գործիքներ, ինչպիսիք են ՋԹ-ները և ՋՊԿ: Այս միջոցով հնարավոր է դարձել սահմանել հանրապետությունում ջրառի և կեղտաջրերի արտանետման ծավալները:


**Ջրային համակարգերի կառավարումն** իրականացնում է ՀՀ տարածքային կառավարման նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեն (ՋՏՊԿ): ՋՏՊԿ-ն պատասխանատու է պետության սեփականություն հանդիսացող խմելու և ոռոգման ջրամատակարարման, կոյուղու և կեղտաջրերի մաքրման համակարգերի կառավարման և շահա-

գործման համար: ՋՏՊԿ-ն որդեգրել է ջրային համակարգերի կառավարմանը մասնավոր հատվածին ներգրավելու քաղաքականություն:

**Խմելու և ոռոգման ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների կարգավորումն** իրականացնում է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ՀԾԿՀ): Ջրային ոլորտում ՀԾԿՀ-ի հիմնական լիազորություններն են ջրային համակարգի օգտագործման թույլտվության տրամադրումը, մատուցվող ծառայությունների որակի մոնիտորինգը և սակագների սահմանումը:

**Ջրային ոլորտի բարձրագույն խորհրդատվական մարմինը Ջրի ազգային խորհուրդն** է (ՋԱԽ), ՋԱԽ-ն ՋՌ-ների կառավարման խնդիրներին առնչվող խորհրդատվական մարմին է, որը նաև առաջարկություններ է ներկայացնում քաղաքականության, օրենսդրական փաստաթղթերի և Ջրի ազգային ծրագրի վերաբերյալ: ՋԱԽ-ը նախագահում է ՀՀ վարչապետը: ՋԱԽ-ի անդամների շարքում են նախարարներ և բարձրաստիճան այլ պետական պաշտոնյաներ՝ ջրային, գյուղատնտեսության, բնապահպանության և էկոնոմիկայի ոլորտներից:

Հայաստանում ջրային ոլորտի կառավարման կառուցվածքային սխեման հետևյալն է՝



## Օրենսդրական բարեփոխումներ

### «Ջրային օրենսգիրքը»

«Ջրային ոլորտի կարգավորման համար մեծ նշանակություն ունեցան մի շարք օրենսդրական բարեփոխումներ, մասնավորապես՝ 2002 թ. «Ջրային օրենսգրքի ընդունումը: Այն սահմանեց նոր գաղափարներ, որոնք գործում են բազմաթիվ զարգացած երկրներում՝ ապահովելով ջրային ոլորտի կառավարման արդյունավետությունը: Դրանք են.

- ԶՌ-ների համապարփակ կառավարումը,
- ԶՊԿ ինստիտուտի ձևավորումը և վարումը,
- ԶԹ-ների տրամադրումը՝ ապահովելով հասարակության մասնակցությունն այս գործընթացում,
- ԶՌ-ների ապակենտրոնացված կառավարումը,
- «առաջարկն է ձևավորում պահանջարկը» սկզբունքի կիրարկումը,
- ԶՌ-ների և ջրային համակարգերի կառավարման մարմինների գործառույթների հստակեցումը:

Ջրային օրենսգրքով ամրագրվեցին այնպիսի նոր հասկացություններ, ինչպիսիք են «ազգային ջրային պաշարը» և «օգտագործելի ջրային ռեսուրսները»:

Ազգային ջրային պաշար են համարվում այն որակի և քանակի ջրերը, որոնք պահանջվում են մարդկանց հիմնական կարիքները ներկայում և ապագայում բավարարելու, ինչպես նաև ջրային էկոհամակարգերը պահպանելու և ջրային կայուն զարգացումն ու օգտագործումն ապահովելու համար:

Օգտագործելի ԶՌ է համարվում ԶՌ-ների այն մասը, որ կարող է բաշխվել սպառման համար՝ առանց նվազեցնելու ազգային ջրային պաշարը: Այս երկուսի տարանջատումը խիստ կարևոր էր երկրում ջրային ոլորտի հեռանկարային զարգացման համատեքստում:

### «Ջրային օրենսգրքից բխող ենթաօրենսդրական բարեփոխումները»

«Ջրային օրենսգրքի կիրարկումն ապահովելու նպատակով 2002թ. սկսած ընդունվել է շուրջ 120 նորմատիվ իրավական ակտ: Դրանք նպատակ են ունեցել կարգավորել «Ջրային օրենսգրքից բխող ջրային հարաբերությունները, ինչպիսիք են ԶԹ-ների ձեռքբերումը, ԶՊԿ վարումը, անդրսահմանային ԶՌ-ների մասին տեղեկատվության տրամադրման, ԶՌ-ների մոնիտորինգի իրականացումը, ստորերկրյա աղբյուրների պահուստավորումը, էկոլոգիական թողքերի չափաքանակների սահմանումը,

ինչպես նաև ՋՌ-ների կառավարմանը, պահպանությանն ու օգտագործմանն ուղղված այլ հարցերը:

**«Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքը**

Օրենքը փաստորեն հանդիսանում է ՋՌ-ների և ջրային համակարգերի ռազմավարական օգտագործման և պահպանության հեռանկարային զարգացման հայեցակարգ: Այն ջրօգտագործման գերակա սկզբունքների սահմանման հիմքն է: Օրինակ, ՋԹ-ների տրամադրումը, համաձայն վերոնշյալ օրենքի, առաջին հերթին պետք է իրականացվի հասարակական շահերի պաշտպանության սկզբունքով՝ առաջին գերակայությունը տալով խնելու նպատակով ջրօգտագործմանը: Օրենքով ամրագրվել է նաև ջրառաջարկի գերակայությունը ջրապահանջի նկատմամբ:

**«Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը**

Օրենքն ընդունվել է 2006 թվականին: Ջրային օրենսգրքի ընդունումից հետո սա կարելի է համարել ոլորտի ամենակարևոր օրենսդրական ձեռքբերումներից մեկը: Ջրի ազգային ծրագիրը մշակելիս, բացի մասնագիտական, միջգերատեսչական քննարկումներից, իրականացվել են նաև հանրային լսումներ օրենքի նախագծում հանրության կարծիքը արտացոլելու նպատակով:

ԱՄՆ ԱՏԳ աջակցությամբ հաշվի է առնվել նաև միջազգային փորձը: Օրենքում.

- տրվել են ՀՀ ՋՌ-ների դասակարգման և գնահատման չափանիշները,
- սահմանվել են Հայաստանի ողջ տարածքի ՋՌ-ների ընդհանուր պաշարի, ազգային ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների, ռազմավարական ջրային պաշարի և անդրսահմանային ջրային ռեսուրսների մեծությունները, ինչպես նաև դրանց կառավարմանը ներկայացվող պահանջները,
- մշակվել են միջոցառումներ՝ ուղղված ապագայում ազգային ջրային պաշարի պահպանմանն ու ավելացմանը, ինչպես նաև ՋՌ-ների կառավարման արդիականացմանը,
- սահմանվել է պետական հատուկ նշանակության ջրային համակարգերի ցանկը, որոնց պահպանման ծախսերը հաշվարկվում և ամրագրվում են ՀՀ պետական բյուջեում կամ փոխհատուցվում են երաշխավորված ֆինանսական աղբյուրից,
- ուրվագծվել է ջրամբարաշինարարության հեռանկարային ծրագրի հայեցակարգը, որը հիմնավորում է հանրապետության տարածքում կազմավորվող ջրային ռեսուրսների առաջարկի հեռանկարը:



Հարկ է նշել, որ առ այսօր հանրապետության ջրային ոլորտում իրականացված օրենսդրական, կառուցվածքային և այլ փոփոխություններն ընդունելի են ոչ միայն տարածաշրջանի, այլ նաև միջազգային հեղինակություն վայելող փորձագետների և կազմակերպությունների կողմից և պատահական չէ, որ Հարավկովկասյան տարածաշրջանում Հայաստանը համարվում է ոլորտի առաջատարը և տարածաշրջանի միակ երկիրն է, որն այսօր արդեն ունի ջրի ազգային ծրագիր:

## Ջրային ռեսուրսների կառավարումը Հայաստանում և ՋՌԿԳ-ն

Ջրային ռեսուրս հասկացությունը հստակ ձևակերպում ստացավ 2002թ. ընդունված ՀՀ ջրային օրենսգրքով: Ըստ օրենսգրքի ջրային ռեսուրս են համարվում բոլոր մակերևութային և ստորգետնյա ջրերը: Այդ թվում են առուները, գետերը, աղբյուրները, գերխոնավ տարածքները, լճերը, լճակները, ձնածածկույթները, սառցադաշտերը, ջրանցիկ շերտերը և ջրային այլ մարմինները: 2002 թվականից ի վեր պետության սեփականություն հանդիսացող ջրային ռեսուրսների կառավարումն ու պահպանությունն իրականացնում է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի Ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը՝ ՋՌԿԳ-ն: ՋՌԿԳ-ն տրամադրում է ջրօգտագործման թույլտվություն, որի միջոցով հնարավոր է դառնում ջրառի և կեղտաջրերի արտանետման ծավալների սահմանումը և հանրապետության ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումն ու պահպանումը:

Ջրավազանային կառավարումը և ջրավազանային կառավարման տարածքների ստեղծումը տվյալ տարածքում համապարփակ կառավարման հասնելու ամենակարևոր քայլերից է: Ջրավազանային կառավարումը ՀՀ-ում իրականացվում է Ջրավազանային կառավարման տարածքային բաժինների միջոցով (ՋԿՏԲ), որոնք հիմնադրվել են 2003 թ.՝ ՀՀ վարչապետի որոշմամբ:


Ջրօգտագործման և ջրահեռացման համապատասխանությունը թույլտվության պայմաններին իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարության, Բնապահպանական պետական տեսչության (ԲՊՏ) և ՋՌԿԳ-ի հինգ ՋԿՏԲ-ների միջոցով:

ՋՌ-ների համապարփակ կառավարման մոդելն ամենատարածված մոդելներից է աշխարհում: Համապարփակ կառավարման մոդելով են ուղղորդվում հիմնականում բոլոր զարգացող երկրները: Այն երկարամա-

Կետ կառավարման մոդել է և նպատակ ունի, հաշվի առնելով բոլոր ջրօգտագործողների շահերը և, չխաթարելով էկոլոգիական հավասարակշռությունը, սպառողների համար ապահովել անհրաժեշտ որակի և քանակի ջուր:

ԶԿՏԲ-ների ստեղծումը կարելի է դասել ոլորտի կառուցվածքային ամենակարևոր բարեփոխումների թվին: Նկարում պատկերված են ՀՀ ԶԿՏԲ-ները:

ՀՀ ջրավազանային կառավարման տարածքները



ԶԿՏԲ-ների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով այժմ նախագծային փուլում է Սևան-Հրազդան ջրավազանի բաժանումը 2 մասի՝ Սևանի և Հրազդանի ավազանների:

ՋԿՏԲ-ները նպատակ ունեն արդյունավետ, նպատակաուղղված կերպով կառավարել և պահպանել տվյալ ջրավազանի ՋՌ-ները համաձայն ջրավազանային կառավարման պլանի՝ ապահովելով ՀՀ ջրային օրենսգրքի, ջրի ազգային քաղաքականության, ջրի ազգային ծրագրի և բնագավառին վերաբերող այլ իրավական ակտերի պահանջները: ՋԿՏԲ-ները կապող օղակ են ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ՋՌԿԳ-ի և իրենց կողմից սպասարկվող համայնքների միջև:

ՋՏԿԲ-ները սահմանված կարգով իրականացնում են հետևյալ գործառնությունները.

1. ջրօգտագործողներից և լիազոր ներկայացուցիչներից ՋԹ-ների հայտերի ընդունում, գրանցում ըստ ոլորտների և ներկայացում ՋՌԿԳ՝ հետագա ընթացք տալու համար,
2. ՋՌԿԳ-ի կողմից տրված ՋԹ-ների պայմանների կատարման նկատմամբ հսկողություն,
3. Ելնելով ջրավազանի առանձնահատկությունից կազմակերպում և մասնակցում են ջրավազանային պլանների աշխատանքների կատարմանը,
4. հսկողություն են իրականացնում ջրառով նախատեսված ՋՌ-ների օգտագործման, հաշվառման, ռեժիմի, ջրաչափական կառույցների սարքերի աշխատանքի, ինչպես նաև ջրապահպան գոտիների պահպանման նկատմամբ,
5. սահմանված կարգով իրենց կատարած աշխատանքի համար հաշվետվություն են ներկայացնում ՋՌԿԳ,
6. մասնակցում են ջրօգտագործողների միջև ջրերի բաշխման հեռանկարային պլանների կազմմանը,
7. մշակում են ավազանային ծրագրեր՝ ելնելով ավազանի առանձնահատկությունից:

## Ջրային ռեսուրսների կառավարման նոր գործիքներ

### Ջրօգտագործման թույլտվություններ (ՋԹ)

ՀՀ ջրային օրենսգիրքը մեկ օրենսդրական փաստաթղթում միավորեց Հայաստանի ՋՌ-ների համապարփակ և առաջադեմ կառավարմանը հասնելու անհրաժեշտ պայմանները, մասնավորապես, ՋԹ-ների տրամադրման գործընթացում:

Յուրաքանչյուր ՋԹ պետք է համապատասխանի ռազմավարական կառավարման պահանջներին, որոնք ձևավորվում են ըստ ջրի ազգային ծրագրի, ինչպես նաև ջրի որակի և քանակի ստանդարտների: ՋԹ-ն ներառում

է ստորերկրյա կամ մակերևութային ՋՌ-ներից ջրառի և առաջացած կեղտաջրերի արտահոսքի թույլտվությունը:

ՀՀ ջրային օրենսգրքի համաձայն ցանկացած տեսակի ջրօգտագործման համար յուրաքանչյուր ոք պարտավոր է ունենալ ՋԹ՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.

- ջրօգտագործում, որը նպատակաուղղված չէ շահույթ ստանալուն,
- հանգստի, լողալու, ջրային մարզաձևերով (ներառյալ առանց շարժիչների օգտագործման ջրային սպորտաձևերով) զբաղվելը,
- կարթով ձկնորսությունը և սպորտային որսորդությունը,
- տեղումների օգտագործումն անձանց սեփականություն հանդիսացող հողատարածքներում,
- ջրի օգտագործումը հակահրդեհային նպատակով,
- էկոլոգիական նպատակով սանիտարական ելքերի համար ջուր վերցնելը:

Վերը նշված նպատակներով ջրօգտագործումը համարվում է ազատ ջրօգտագործում: ՀՀ ջրային օրենսգրքով սահմանված է նաև ջրի անվճար օգտագործման հնարավորությունը. ՋԹ-ի առկայության դեպքում, մասնավորապես, «Ռեռզբելի աղակալած հողերի լվացման և խոնավալիցք հաղորդելու նպատակով վաղ գարնանային և ուշ աշնանային ջրերի օգտագործումը»:


ՋԹ-ի հայտի գնահատման ժամանակ ՀՀ ջրային օրենսգրքով ամրագրված են գերակայության հետևյալ չափանիշները.

1. առաջնահերթությունը տրվում է մարդկանց բարեկեցության և շրջակա միջավայրի պահպանությանն ու բարելավմանը, առաջին հերթին ապահովելով խմելու ջրամատակարարման և ջրահեռացման գերակայությունները,
2. երկրորդ գերակայությունը տրվում է բնական ջրահոսքերի հուններից ջրառ չչափանջող ավանդական ջրօգտագործողներին,
3. երրորդ գերակայությունը տրվում է հասարակական շահի համար առավելագույն օգուտ ապահովող ջրօգտագործողներին,
4. չորրորդ գերակայությունը տրվում է ջրօգտագործողներին, որոնք առաջարկում են ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման խրախուսմանը և որակի բարելավմանն ուղղված որոշակի միջոցառումներ:

ՀՀ ջրային օրենսգրքով ամրագրվել է ՋՌ-ների թափանցիկ կառավարում և այդ խնդրում հանրության մասնակցությունը, որն էլ ՋԹ-ների հայտի գնահատման ժամանակ արտացոլվում է ՋԹ-ների նախագծին հասարակայնության ծանուցմամբ:

«Ճ ջրային օրենսգրքի և կառավարության որոշման պահանջների համաձայն ՋԹ-ների հայտերի ընդունման, գնահատման, դրանց հասարակայնության ծանուցման և ՋԹ-ների ձևակերպման համար նախատեսված է 30-90 օր, սակայն ՋԹ-ների հայտերի գնահատման գործընթացը հիմնականում տևում է ոչ ավելի, քան 20-25 օր:

### ՋԹ-ի տրամադրման սխեմա



Ոլորտի ձեռքբերումների շարքում հարկ է առանձնացնել ՋԹ հայտերի և ձևակերպված ՋԹ-ների տվյալների համակարգչային բազայի ստեղծումը, որից օգտվելը ՋՈԿԳ-ի կայք էջի միջոցով հետագայում մատչելի կդառնա բոլոր շահագրգիռ կողմերի համար: 2007թ. հունվարի 1-ի դրությամբ արդեն իսկ ձևակերպվել է 1300 ՋԹ-ներ 6.9 մլրդ մ<sup>3</sup>/տարի ջրառի համար, որից հիդրոէներգետիկան (որպես շրջանառու ջրագտագործող) կազմում է 3.1 մլրդ մ<sup>3</sup>/տարի, իսկ առանց վերջինիս 3.8 մլրդ մ<sup>3</sup>/տարի, այդ թվում նակերևութային ՋՈ-ից՝ 2.2 մլրդ մ<sup>3</sup>/տարի, իսկ ստորերկրյա ՋՈ-ից՝ 1.6 մլրդ մ<sup>3</sup>/տարի: Փաստորեն, ձևակերպված ՋԹ-ներով իրավական դաշտ է բերվել հանրապետության ջրագտագործման ծավալի շուրջ 90%:

## Ջրային պետական կադաստր (ՋՊԿ)

**ՋՊԿ.** ՋՌ-ների համապարփակ կառավարման համար վճռորոշ դեր ունի ՋՌԿԳ-ի կողմից վարվող ՋՊԿ-ն: ՋՊԿ-ն մշտապես գործող համակարգ է, որը համապարփակ տվյալներ է գրանցում ջրային ռեսուրսների քանակական ու որակական ցուցանիշների, ջրի ավաք ավազանների, ջրավազանների հուններից ու ափերից արդյունահանվող նյութերի, կենսառեսուրսների կազմի ու չափաքանակների, ջրօգտագործողների, ՋԹ-ների և ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների վերաբերյալ:

**ՋՊԿ նշանակությունը.** ՋՊԿ-ն հնարավորություն է ընձեռում նախապես տեղեկանալ, թե անհրաժեշտ վայրում, որտեղ, ինչ քանակի ու որակի և ըստ օգտագործման նշանակության ՋՌ-ներ կան, ջրային ինչպիսի համակարգերի միջոցով է իրականացվում ջրի ամբարումը, փոխադրումը, բաշխումը, մաքրումը և կեղտաջրերի հեռացումը: Այն հետագայում հնարավոր կդարձնի կանխատեսել ՋՌ-ների վիճակի կայունությունը, ջրային համակարգերի անվտանգությունը, ջրային բնագավառում աղետալի իրավիճակների առաջացման հնարավորությունը և գնահատել ռիսկի տարածքները:

**ՋՊԿ առաքելությունը.** ՋՊԿ-ի առաքելությունն է տեղեկատվական հենքի ստեղծմամբ.

- բարելավել ջրային ոլորտի կառավարման և կարգավորման արդյունավետությունը՝ ապահովելով ջրերի կայուն կառավարման հզորացումը,
- ապահովել ՋՌ-ների կենսունակ գործածությունը բնապահպանական և տնտեսական առումներով,
- բարձրացնել հասարակական իրազեկության մակարդակը և մասնակցությունը՝ ջրային բնագավառում որոշումների կայացման խնդրում:

**Ներկան.** ՋՊԿ-ի ինստիտուտն այսօր ապահովված է համապատասխան օրենսդրությամբ:

ՋՊԿ-ն իրականացնում է.

- ՋՊԿ-ում փաստաթղթերի գրանցում և տեղեկատվության տրամադրում,
- ՋՌ-ների մոնիտորինգի իրականացման առաջադրանքի ձևավորում և դրանց մասին հաշվետվությունների գրանցում,
- ՋՌ-ների մոնիտորինգի իրականացման պլանավորում ու կառավարման գործընթացում դրանց արդյունքների ներառում,

- ՋՌ-ներին առնչվող հիդրոտեխնիկական կառույցների (այդ թվում՝ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի) հաշվառում՝ ջրօգտագործման արդյունավետության բարձրացման ուղիների մշակման նպատակով,
- ՋՌ-ների հաշվեկշռի կազմում՝ ըստ առանձին ջրավազանների ու գումարային:

Վերոհիշյալ գործառնությունների իրականացման համար ՋՊԿ-ն ունի անհրաժեշտ սարքավորումներ, համակարգչային տեխնիկա և ծրագրեր (Arc GIS, Mike Basin, Visual Basic լեզվով կազմված հատուկ ծրագրեր): ՋՊԿ հզորացման և կայացման նպատակով ԱՄՆ ՄՁԳ-ն տրամադրել է համապատասխան համակարգչային տեխնիկա: ԱՄՆ ՄՁԳ աջակցությամբ ՋՊԿ աշխատակազմը անցել է նաև մասնագիտական որակավորման բարձրացման դասընթացներ: ՀՀ պետական բյուջեի կողմից 2005-2006 թթ. ֆինանսավորվել է ՋՊԿ-ի (GIS) և ջրային հաշվեկշռի կազմման (Mike Basin) կիրառական համակարգի մշակման աշխատանքը:

**Հեռանկարը.** ՋՌ-ների և դրանց արդյունավետ օգտագործմանը նպաստող հիդրոտեխնիկական կառուցվածքների կառավարման ու պահպանության ոլորտում միասնական պետական ռազմավարության իրականացումն ապահովելու համար վճռորոշ նշանակություն ունի ՋՊԿ ինստիտուտում Երկրատեղեկատվական տեղեկատվական համակարգի (ԵՏՀ) ներդրումը, որը կհանդիսանա հանրապետության ՋՌ-ի համապարփակ կառավարման երաշխիքը:

ՀՀ ՋՊԿ-ն, որպես կառավարման գործիք, ստեղծվել է համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի պահանջների ու հայեցակարգային դրույթների: Հաշվի են առնվել Հայաստանում տարիների ընթացքում ձևավորված ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության փորձը, ՋՊԿ-ի վարման պրակտիկան, շրջանառվող տվյալների ձևերը և բովանդակությունը, տեղեկատվության մատչելիության անհրաժեշտությունը, ինչպես նաև տեղեկատվության մատչելիության ձևի ժամանակի պահանջը:

ԵՏՀ-ն հնարավորություն է տալիս տվյալների զրանցման, համակարգման և պահպանման հետ մեկտեղ կազմել հարցումներ և տեղեկատվություն ընտրել քարտեզներից և տվյալների հենքերից, կազմել վերլուծություններ և հաշվետվություններ ՋՌ-ների և ջրօգտագործման վերաբերյալ: ԵՏՀ-ն Երևանում և ավազանային կառավարման գրասենյակներում վարում են վերապատրաստված մասնագետները: ԵՏՀ-ն ներառում է տվյալների հենքեր, թվային քարտեզներ և համակարգչային ծրագրեր (ստորև ներկայացված է ԵՏՀ շերտերի ընդհանուր պատկերը):

# ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԿԱՅԱՍԱՆՈՒՄ

	Ամվանումը հնչ է ներկայացնում Տվյալների աղբյուրը Մասշտաբը և ճշտությունը	ՀՀ գետային ցանցը գծային կորդինատներով (routes_rivers) Գետային ցանցը ներկայացված գծային կորդինատներով Տրագրաֆիկական քարտեզներ 1:200 000
	Ամվանումը հնչ է ներկայացնում Տվյալների աղբյուրը Մասշտաբը և ճշտությունը	ՀՀ ջրհավաք ավազանները ըստ Ատրախլիքի (river_catchments) ՀՀ ջրհավաք ավազանների դիրքը Թվային ռեխիբի մոդել 90՝ ճշտությամբ
	Ամվանումը հնչ է ներկայացնում Տվյալների աղբյուրը Մասշտաբը և ճշտությունը	Ստորերկրյա ջրերի հանքավայրեր (groundwater_deposits) Ստորերկրյա քարոլոսիան ջրերի հանքավայրերի սահմաններ երկրաբանական ֆունդեր, ճշտությունը գնահատված չէ 1:1 000 000
	Ամվանումը հնչ է ներկայացնում Տվյալների աղբյուրը Մասշտաբը և ճշտությունը	Սելավատար գետերի ավազաններ (mudflow_basins) Սելավատար գետերի ավազանների դիրքը Թվային ռեխիբի մոդել 90՝ ճշտությամբ
	Ամվանումը հնչ է ներկայացնում Տվյալների աղբյուրը Մասշտաբը և ճշտությունը	Ձ/Օ թույլտվություններ (Water_use_permits) Թույլ տրված ջրօգտագործման տեղադրությունը ՀՀ բնապահպանության ՁՊԳ 3-15 մ GPS ճշտությամբ
	Ամվանումը հնչ է ներկայացնում Տվյալների աղբյուրը Մասշտաբը և ճշտությունը	Օդի ջերմաստիճան (Temperature_data) ՀՀ մետեոկայանների տեղադրությունը ՁՀՀԻ 1:200 000
	Ամվանումը հնչ է ներկայացնում Տվյալների աղբյուրը Մասշտաբը և ճշտությունը	Տեղումներ (Precipitation_data) ՀՀ մետեոկայանների տեղադրությունը ՁՀՀԻ 1:200 000
	Ամվանումը հնչ է ներկայացնում Տվյալների աղբյուրը Մասշտաբը և ճշտությունը	Սողանքներ (landslides) ՀՀ սողանքների դիրքը Արհիվային տվյալներ 1:200 000, 3-15 մ GPS ճշտությամբ
	Ամվանումը հնչ է ներկայացնում Տվյալների աղբյուրը Մասշտաբը և ճշտությունը	Հորատանցքեր (Wells) Հիդրոլոգիական հորատանցքերի դիրքը երկրաբանական վարչություն 1:200 000, 3-15 մ GPS ճշտությամբ
	Ամվանումը հնչ է ներկայացնում Օգտագործումը Տվյալների աղբյուրը Մասշտաբը և ճշտությունը	Որակի դիտակետեր (Water_quality_monitoring_stations) Մաներևութային ջրային ռեսուրսների որակի դիտակետերի տեղադրումը Գետերի և վերին ջրի աղտոտող նյութերի եռասյակային տվյալների գրանցում և վերլուծություն Հրշակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոնի տվյալներ 1:200 000, աղտոտման աղբյուրների նկատմամբ բավարար ճշտություն
	Ամվանումը հնչ է ներկայացնում Օգտագործումը Տվյալների աղբյուրը Մասշտաբը և ճշտությունը	Հիդրոլոգիական դիտակետեր (Water_quantity_monitoring_stations) Մաներևութային ջրային ռեսուրսների քանակի դիտակետերի տեղադրումը Գետերի ջրի մախի, մակարդակի, ջերմաստիճանի ամենօրյա և տարեկան հաշվառում և վերլուծություն Հիդրոոբերևութաբանության Հայաստանի գործակալության տվյալներ 1:200 000, ճշտությունը գնահատված չէ
	Ամվանումը հնչ է ներկայացնում Օգտագործումը Տվյալների աղբյուրը Մասշտաբը և ճշտությունը	Ստորերկրյա ջրեր (Groundwater_aquifers) Ստորերկրյա քարոլոսիան ջրերի հանքավայրերի սահմաններ Ստորերկրյա քարոլոսիան ջրերի պաշարների հաշվառում երկրաբանական ֆունդեր, ճշտությունը 1:500 000, սահմանների ճշտությամբ գնահատված չէ
	Ամվանումը հնչ է ներկայացնում Օգտագործումը Տվյալների աղբյուրը Մասշտաբը և ճշտությունը	Լճեր և ջրամբարներ (Reservoirs_lakes) ՀՀ լճեր, ջրամբարները, անվանումները և հատկանիշները Մաներևութային ջրերի ռեսուրսներ Տրագրաֆիկական քարտեզներ, 2ժժ ճշտությամբ արբանյակային նկարներ, 1:200 000, սահմանների ճշտությամբ 2ժժ
	Ամվանումը հնչ է ներկայացնում Օգտագործումը Տվյալների աղբյուրը Մասշտաբը և ճշտությունը	Գետեր (Rivers) ՀՀ գետային ցանցը Մաներևութային ջրային ռեսուրսներ, ջրօգտագործում Տրագրաֆիկական քարտեզներ 1:200 000
	Ամվանումը հնչ է ներկայացնում Օգտագործումը Տվյալների աղբյուրը Մասշտաբը և ճշտությունը	Բնակավայրեր (Settlements) ՀՀ բնակավայրերի անվանումները, տեղադրումը, բնակչությունը Ջրօգտագործման վերլուծություն Տրագրաֆիկական քարտեզներ, ՀՀ կառավարության որոշում, ՀՀ 2007թ. մարտիամարտի պաշտոնական տվյալներ 1:200 000, բնակավայրերի իրական սահմաններում
	Ամվանումը հնչ է ներկայացնում Օգտագործումը Տվյալների աղբյուրը Մասշտաբը և ճշտությունը	Ավազաններ (Basins) Ավազանային կառավարման տարածքների սահմաններ Անվազանների սահմաններում ջրային ռեսուրսների և ջրօգտագործման հաշվառում և վերլուծություն ՀՀ կառավարության որոշում, տրագրաֆիկական քարտեզ 1:200 000
	Ամվանումը հնչ է ներկայացնում Օգտագործումը Տվյալների աղբյուրը Մասշտաբը և ճշտությունը	Արզղեր (Marzes) ՀՀ մարզերի սահմանները, վարչական բաժանումը Սարդի սահմաններում ջրային ռեսուրսների և ջրօգտագործման վերլուծություն Տրագրաֆիկական քարտեզներ, ՀՀ կառավարության որոշում 1:200 000, սահմանների տեղադրման ճշտությունը 50՝



ՋՊԿ-ի զարգացման ուղղություններն են՝ ԵՏՀ-ի կիրառմամբ.

- Գետավազանների մակերևութային և գետային հոսքերի կանխատեսումային մոդելավորում մանրամասն (1:50000 և 1:25000 մ-բի) թվային քարտեզների հիման վրա:
- Տեղեկատվական համակարգի գործառնական ընդլայնում փաստաթղթերի մշակման, ըստ պահանջի տեղեկատվության տրամադրման և պահանջվող բովանդակությամբ հաշվետվությունների կազմման ավտոմատացման ուղղությամբ:
- Հանրապետությունում ջրի առաջարկի և պահանջարկի դինամիկայի վերլուծության մեթոդիկայի և ՋՌ-ների կառավարմանն աջակցող համակարգչային ծրագրերի մշակում:
- ԵՏՀ-ի աշխատանք ինտերնետում և հանրապետական գերատեսչական ցանցի ստեղծում:

### **Հայաստանի գետային ցանցի և ջրհավաք ավազանների կոդավորում**

2006 թվականի ընթացքում իրականացվել է Հայաստանի գետային ցանցի և ջրհավաք ավազանների կոդավորումը՝ հիմնված նախկին ԽՍՀՄ ջրային օբյեկտների կոդավորման և ներկայում Եվրամիության երկրներում կիրառվող ERICA կոդավորման համակարգերի վրա: Գետային ցանցի կոդավորումը հնարավորություն է ընձեռում ջրաբանական հետազոտությունների հիդրոլոգիական բանկի ստեղծման, մասնավորապես ջրաբանական ուսումնասիրությունների և ջրային կադաստրի կատարելագործված վարման համար: Կոդավորման հիմնական նպատակը Հայաստանում ջրային օբյեկտների համարակալման համակարգի ներմուծումն է, որով 5 կմ-ից ավելի երկարություն ունեցող յուրաքանչյուր գետ, վտակ, ինչպես նաև դրանց համապատասխան ջրհավաք ավազանները և միջավազանները ստանում են ուրույն միարժեքորեն որոշվող կոդ:

Ջրային օբյեկտների ընդհանուր կոդավորման համակարգի առկայությունը հնարավոր է դարձնում ապահովել Ջրային պետական կադաստրի բաղկացուցիչ տարրերի՝ տվյալների բազաների փոխկապվածությունը, ինչպես նաև տարբեր հաստատությունների աղյուսակային և տարածական տվյալների ինտեգրումը մեկ տեղեկատվական համակարգի շրջանակներում:

## Ջրային ռեսուրսների կառավարման հետագա ծրագրերը

Վերջին 5 տարիներին Հայաստանը սկսել է առաջատար դիրք զբաղեցնել ջրային ոլորտի բարեփոխումների առումով: Ստեղծվել է իրավական հիմք և հստակ քաղաքականություն՝ ոլորտում արդյունավետ կառավարում իրականացնելու համար: Արդի հիմնախնդիրներից է ստեղծված կառուցվածքային և օրենսդրական բազայի հիման վրա ստեղծել առավել արդյունավետ կառավարչական և կարգավորող մեխանիզմներ: Բարեփոխումների այս փուլում հարկ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել հետևյալի վրա.

1. Ջրի ազգային ծրագրով ամրագրված կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ միջոցառումների իրականացում,
2. ՋՏԿԲ-ների հզորացում,
3. ՋՈ-ի կառավարման ապակենտրոնացում,
4. ՋՈ-ի կառավարման խնդրում հասարակայնության մասնակցության և դերի բարձրացում,
5. ՋՈ-ի կառավարման գործիքների հզորացում:

### Լրացուցիչ տեղեկատվություն

ՀՀ ջրային ոլորտի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կարելի է գտնել հետևյալ ինտերնետային կայքերում.

ՋՈԿԳ [www.wrma.am](http://www.wrma.am)

Փի Էյ Գավրնմենթ Սերվիսիզ, Ինկ. [www.paconsulting.am](http://www.paconsulting.am)

ՀԾԿՀ [www.psrc.am](http://www.psrc.am)



Սույն գրքույկը տպագրվել է Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ: Գրքույկում տեղ գտած տեսակետները կարող են չարտացոլել Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետները: